XVIII

ԱՆԱՆՈՒՆ ԼԻՎՈՌՆԱՅՈՒ(?) ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XVII Դ.)

«Համառօտ վիպասանութիւն յաղագս ժամանակաց կենցաղոյս ի յիսկզբանէ ստեղծման աշխարհի մինչև ցներկայական ամանակս մեր» խորագիր կրող ժամանակագրությունը գտնվում է Մատենադարանի հետևյալ ժողովածուներում՝

№ 1786, 78ա—85բ էջերում՝ A տարբերակ,

№ 82, 248ա—253բ էջերում՝ Б տարբերակ, իսկ մի փոքրիկ հատվածը № 6562 ժողովածուի 31ա էջում՝ В տարբերակ։ Ինչպես վերնագրից երևում է, հեղինակն իրեն նպատակ է դրել համառոտ կերպով շարադրել մի ժամանակագրություն, որը սկսվում է աշխարհի ստեղծագործությունից և հասնում մինչև իր ժամանակը։

Ժամանակագրությունն սկսվում է Ադամից, որի հնագույն շրջանին վերաբերող մասը հասնում է մինչև 3925 թվականը՝ Հրեաստանի Հերովդես թագավորը։ Այս ամենի համար հեղինակին աղբյուր են ծառայել Աստվածաշունչը և այլ աստվածաբանական գրքեր։

Այս մասում հեղինակը երբեմն կատարել է շեղումներ, զետեղելով Հայոց պատմության հնագույն՝ վիպական ու առասպելական շրջանի, տվյալներով՝ Հայկի և Բելի, Արա Գեղեցիկի և Շամիրամի, Տիգրանի և Աժդահակի պատերազմների մասին, շարադրելով Մ. Խորենացու «Հայոց պատմության» Ա գրքի համապատասխան։

Քրիստոսի ծնունդը և սրա հետ կապված մի քանի դեպքեր հիշատակելուց հետո հեղինակն անցնում է ժամանակագրության պատմական մասի շարադրությանը։ Այն սկսվում է Ներոնի կողմից քրիստոնյաների հալածանքներից և հասնում մինչև 1582 թվականը՝ լատինական տոմարի ընդունումը։ Այնուհետև կատարում է ողջ շարադրածի ամփոփում և թվում աշխարհի 7 դարագլուխները քրիստոնեական պատկերացման համաձայն։ Ապա հեղինակը վերադառնում է Մահմեդի ծննդին և խիստ համառոտ ժամանակագրական կարգով դեպքերի հիշատակությունը հասցնում մինչև 1582 թ.։

Սրանից հետո նա կրկին վերադառնում է մեր թվականության 1369-ին և մեծ մասամբ Իտալիայում տեղի ունեցած պատահարների ու հրաշքների հետ միասին հիշատակում զանազան պատմական դեպքեր, որոնք ժամանակագրական կարգով հասնում են մինչև 1577 թվականը։ Այստեղից հեղինակը երրորդ անգամ ետ է գնում մինչև մեր թվականության առաջին տարին և շարադրում «բազում զարմանալիք», որոնք ըստ էության մեծ մասամբ ժողովրդի մեջ տարածված առասպելական զրույցներ և բնական արհավիրքներին

վերաբերող տեղեկություններ են։ Նման դեպքերի հիշատակությունը ժամանակագրական կարգով հասցնում է մինչև 1223 թվականը։

Այսպիսով, ժամանակագրությունն ամբողջությամբ վերցրած պատմական դեպքերի ժամանակագրական հաջորդականությամբ չի շարադրված, ընդհակառակը, ժամանակագրական կարգը պահպանված է վերևում թված ժամանակագրության առանձին հատվածների մեջ, որոնք ունեն ենթավերնագրեր, այսպես. «Ամք ի ծննդենէն Քրիստոսի», «են և այլք բազումք զարմանալիք որք եղեն ի վերայ երկրի, զորոց զսակաւ ինչ շարագրեցաք աստ», «են և այլք ինչը բազում զարմանալիք զորոց զսակաւս շարագրեցից յետ ծննդեան Քրիստոսի» և այլն։

Թե ո՞վ է եղել այս ժամանակագրության հեղինակը, չկարողացանք պարզել, բայց դժվար չէ որոշել ժամանակը, որովհետև միայն Ա տարբերակում պահպանվել է ուղղակի ցուցում այդ մասին. այնտեղ կարդում ենք. «Եւ ի սկզբանէ աշխարհի մինչև ցայժմ, որ է թիւն մարդեղութեան Փրկչի 1683, են ամք 6884», թեև մի այլ անուղղակի ցուցումով էլ մեկ տարի ետ է բերում, աշխարհի ստեղծագործությունից մինչև իր ժամանակագրության կազմելու տարին հաշվելով 6884 տարի, իսկ «Յառաջ քան զմարդեղութիւն բանին ասուածոյ էին ամք 5200», այսինքն՝ 6884—5200=1684, հետևապես հեղինակը XVII դարի երկրորդ կեսի անձնավորություն է։ Եթե նկատի ունենանք ժամանակագրության պատմական մասի, Եվրոպայի, առավելապես Իտալիայի պատմության վերաբերվելը մի կողմից և ժամանակագրության նախորդող՝ 77-րդ էջում Մարտիրոս դի Առաքելի Լիվոռնո հասնելու փաստի հիշատակումը[1] մյուս կողմից, ենթադրում ենք, որ ժամանակագրությունը կազմվել է Իտալիայում, ամենայն հավանականությամբ Լիվոռնոյում ապրող, հավանաբար կաթոլիկ, մի հայի կողմից,[2] որից և Մարտիրոս դի Առաքելը այնտեղ գտնված ժամանակ ընդօրինակել է ճանապարհորդական իր տետրում։

Իսկ ժամանակագրության Բ տարբերակը, որն ընդօրինակել է Նսայի վարդապետ Թոխաթեցին՝ 1760 թվականին (մինչև հունիսի 2-ը)[3] հավանորեն Մարտիրոս դի Առաքելի ընդօրինակությունից չի կատարվել, այլ մի ուրիշ

---

[1] № 1786 ժողովածուն, որն Մարտիրոս դի Առաքելի ճանապարհորդական տետրն է, որտեղ ընդօրինակած կամ արձանագրված նյութերը կատարվել են տարբեր վայրերում և ժամանակներում։ Այսպէս, նա եղել է Շիրազում (էջ 70բ), հեռավոր վայրերում դանդվելու փաստը հեղինակն ակնարկում է ոմն Աղափիրին նվիրված ոտանավորում (էջ 70բ)։ 1722 թ. Մարտիրոսը լինում է Բենդեր Սուրաթում, Բենդեր Աբասում (էջ 77բ)։ Հավանաբար եղել է Հնդկաստանում (հմմտ. Ցեյլոն կղզու նկարագրության հետ, էջ 73ա) և այնտեղ ընդօրինակել կամ կազմել 1723—1720 թթ. Հնդկաստանում տեղի ունեցած գահակալական կռիվների ժամանակագրությունը (էջ 42բ—43ա) և «Անունք ականաց» աշխատությունը (էջ 72ա—76բ)։ 1723 թ. սեպտեմբերի 1-ին Մարտիրոսին դանում ենք Լիվոռնոյում (էջ 77բ), հավանաբար եղել է Ֆլորենցիայում (հմմտ. 56ա էջի անուղղակի վկայությունը)։

[2] Տակավին XVII դարի սկզբին, դուցե և ավելի շուտ Լիվոռնոյում գոյություն ուներ հայ դաղթականություն (տես Լեո, «Հայոց պատմություն», 1946 թ., Երևան, հատոր 3, էջ 441)։

[3] Պրոֆ. Աշ. Աբրահամյանը Նսայի վարդապետ Թոխաթեցուն սխալմամբ համարում է առաջարկվող ժամանակագրության հեղինակ («Գիտ. նյութերի ժողովածու» (Մատենադարան), Երևան, 1941 թ., էջ 208), տես մեր դրախոսականը Հայկական ՍՍՌ Գիտութ. Ակադեմիայի «Տեղեկագիր» հասարակական գիտություններ, 1948 թ. № 7, էջ 83)։

առայժմ մեզ անհայտ բնագրից։ Այդ են ցույց տալիս տարբերակների մեջ նկատվող զգալի շեղումները։

Ժամանակագրության խորագրում հեղինակը թեև խոստանում է դեպքերը շարադրել աշխարհի ստեղծագործությունից մինչև «ցներկայական ամանակս մեր», բայց այդ խոստումը չի կատարում, որովհետև ժամանակագրության պատմական մասը 1582 թ. այս կողմ չի անցնում, մինչդեռ այն կազմվել է 1683 թ.։ Սա նշանակում է, թե հեղինակը, ժամանակով իրեն մոտ 101 (1582—1683 թ. թ.) տարվա դեպքերը չի արձանագրել։ Ուստի այս ժամանակագրությունը, որպես սկզբնաղբյուր, կարող է բիչ արժեք ունենալ, այն պարզ պատճառով, որ ժամանակակցի վկայություններ չեն և երկրորդ պատմական մասի համար հեղինակը առանձին սկզբնաղբյուրների հետ միասին օգտագործել է նաև ոչ ստույգ աղբյուրներ, ինչպես նաև ժողովրդի մեջ տարածված այլևայլ զրույցներ։ Հենց դրանով պիտի բացատրել մի շարք հայտնի դեպքերի սխալ արձանագրումը։ Այսպես են՝ Կոլոմբոսի կողմից Ամերիկայի գյուտի, Խպանիայի դեմ հոլանդացիների ապստամբության, Գուտենբերգի կողմից տպագրության գյուտի վերաբերյալ վկայությունները և այլն։ Ժամանակագրությունն ընդհանուր առմամբ լավ է պահպանված A տարբերակում, այդ պատճառով էլ այդ դարձրինք հրատարակության հիմք, իսկ Б տարբերակի և № 6562 ժողովածուի մեջ պահված փոքրիկ հատվածի (B) տարընթերցվածքները տվինք տողատակ։

XVIII

ՀԱՄԱՌՕՏ Վ.ԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԴՍ ԺԱՄԱՆԱԿԱՑ ԿԵՆՑԱՂՈՅՍ Ի ՅԻՍԿՅԲԱՆԷ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԻՆՉԵՎ ՅՆԵՐԿԱՅԱԿԱՆ ԱՄԱՆԱԿՍ ՄԵՐ 78ա

Արդ՝ ուրեմն պարտ է դիտել զի յԱդամայ մինչև ի Յովսէփ
5 ԼՆ ամք 2198։[1]

Ի Յովսեփայ և ի գերութենէն Երբայեցւոց մինչև ի Մովսէս և յայնմանէ մինչև ի Սաւուղայ թագաւորելն, են ամք 2889։

Ի Մովսիսէ մինչև ի Սաւուղ զատաւորք էին ամենեքեան։ Ի Սաւուղայ մինչև ի գերութիւնն Երբայեցւոց առ Նաբուգոդոդ-
10 նոսորաւ արքայիւ թագաւորք էին և են ամք 3372։ Զկնի ստեղծման Ադամայ և ամենայն արարածոց 60 ամին Կայէն սպան զԱբէլ, զեղբայր իւր և եգիտ զչափ և զկշիռ։

170 ամին Յօրէլ եգիտ զվրանս և Յօրալ զերաժշտականութիւն՝ զքնար և զտաւիղ։

15 Եւ Դօրէլ էր ճարտարապետ դարբին պղնձի և երկաթի։ Եւ Նոյեման, քոյր Դօրէլի, եգիտ մանել զրուրթս։

130 ամին ծնաւ Սէթ։

135 ամին Սէթ ծնաւ զԵնովս։ 1056 Ղամէք ծնաւ զՆոյ։ 1556 ամին Նոյ ծնաւ զՍէմ և զեղբարս նորայ։

20 1615 Ենովք վերացաւ յերկինս։

1656 եղև ջրհեղեղ ի վերայ ամենայն երկրի։

1658 Սէմ ծնաւ զԱրփաքսաթ։

1693 Արփաքսաթ ծնաւ զՍաղա։

Սաղիմ, որ է Յերուսաղէմ, շինեցաւ ի Սեմայ յորդւոյն Նոյի,
25 1769։

1788 եղև աշտարակաշինութիւն և բաժանումն լեզուաց, որ յետ կործանման աշտարակին եղև անլուր բարբառ բաժանմամբ

1—3 Б տողերը չիք։ 4 Б պարտ է գիտել ուրեմն թէ որքան ամք անցեալք են ի ստեղծմանէ աշխարհի և ի ժամանակս նախնեաց և զթիւս տարեաց նոցա փխ. ուրեմն պարտ է դիտել։ 8 Б ի [Մովսիսէ] չիք։ 9—10 Б Նաբուգոդոնոսորու։ 10—11 Б ստեղծմանն։ 11 Б ամին չիք։ 13 Б 170 փխ. 170 ամին։ 16 Б քոյր Դօրէլայ։ 17 Б ծնաւ Սէթ ամին 130։ 18 Б Սէթ ծնաւ զԵնովս ամին 1056, Ղամէք ծնաւ զՆոյ ամին 1556։ 19 Б Նոյ ծնաւ զՍէթ և զեղբարս նորա, ամին ի վեր անդր փխ. 1556 ամին Նոյ ծնաւ. զՍէմ և զեղբարս նորա։ 20 Б ամին 1615 փխ. 1615։ 21 Б ամին 1656 փխ. 1657, Б ջրհեղեղն եկն։ 22 Б ամին 1658 փխ. 1658։ 23 Б ամին 1693 փխ. 1693։ 24 ԲՎ Երուսաղէմ, Վ որդոյն Նոյին։ 25 Б ամին 1769 փխ. 1769, Վ թվին Ռէձկթ փխ. 1769։ 26 Б ՌէձԸ ամին 1786 փխ. 1788։

լեզուացն և խրոխտանօք ի վերայ միմեանց տիրել կամեին։
Ներրովթ, որ և Նեմրութ, որ է Բէլ եղև առաջին թագաւոր,
որ շինեաց զԲաբիլօն. առ որով էր նախնին մեր՝ Հայկ, որդի
Թորգոմայ։ Եւ Հայկն ի մէջ հսկայիցն մի էր ի ‖ շինելն աշտա- 79ա
5 բակին։

Սա ամբարձ զձեռն իւր ընդդէմ Բէլայ, առնու զորդի իւր զԱրամանեակ[1] չուեալ արաա սգովք 300 և երկոքումբք յարեցելովք գայ հասանէ յերկիրն Արարատայ։ Իսկ միապետեալ Բէլայ զայլսն ամենայն և կոչէ զՀայկն ի Բաբիլօն. յորում ոչ առեալ
10 յանձն։ Դայ Բէլ ի վերայ նորա խրոխտանօք։ Անաանօր ուշիմ և խոհեմ հսկայն քաջագանդուրն և խայտակն, աճապարեալ հաւաքէ զզօրս իւր, հասանէ յիդր ծովակի միոյ, որոյ ալի են ջուրք, մանունս ունելով յինքեանս ձկունս։ Եւ յառաջ կոյս անցեալ հասանէ ի դաշտաձև լեառն մի, տեսանէ զրաղմութիւն ամբոխին
15 Բէլայ։ Ծանեաւ Հայկն զԲէլ առաջի բազմութիւն ամբոխին, եկեալ հասանէ ընարիւք վառելովք արամբք կորովիւք յառաջ մաուցեալք յերկոցունց կողմանց հսկայիցն առ միմեանս դահագին զզրգմունս ի վերայ երկրի առնէին շահաակելով հրսկայզունքն զմիմեանս արկանէին։ Անդ ոչ սակաւք յերկոցունց
20 կողմանցն արք յաղթանդամք ի բերանոյ որոյ դիպեալք ապալ յերկիր կործանէին։ Յայնպիսի անակն ունելի դիպուածս տարակուսանաց տեսեալ արքային տիտանեան, զարհուրեցաւ և ի բլուրն ուստի էջ, վերջոտնեալ ելանէր։ Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ առ արքային Բէլ,
25 քարշէ զլայնայլիճն զիպեցուցանէ գերեք թեւանն կրծից տախտակին և շեշտ ընդ մէջ թիկանցն թափ անցիկ լեալ յերկիր հարստի սլաքն և այսպէս ճոխացեալն տիտանեանն յերկիր զարկուցեալ փչէ զոգին։ Իսկ ամբոխին տեսեալ զայնպիսի ահագին քաջութիւնն փախեան։ Զայս և զայլ բազում քաջութիւնս արարեալ Հայկայ ընդդէմ ներհակաց մեռանի։[4]

1804 շինեցաւ Նինուէ ի Ցելասուրէ։[5]

1810 Ռագաւ. ծնանի զՍերուք։ 79բ

1889 Սերուք ծնանի զՆաքովր։

1898 Նաքովր ծնանի զԹարայ։

35 1905 Նինոս առաջին ինքնակալ թագաւոր եղև ի Ցասորեստան։ Սա եմոյծ զկռապաշտութիւն։

1948 Թարա ծնանի Արբրահամ։

2033 Ծնաւ Իսմայէլ որդի Աբրահամ։ ի յաղախնոյն Հաղարայ։

---

1 Ե կամէին։ 2 Ներրովր, զՆեմրութ։ 6 Ե համբարձ։ 7 Ե զԱրմանեակ, չու արարեալ, ոգովք։ 7—8 Ե այրեցելովք։ 10 Ե անդանօր։ 11 Ե խոհեմ Հայկն հսկայն, հաւաղ փխ. հաւաքէ։ 12 Ե ծովակի։ 13 Ե յինքեան։ 14 Ե լեռն։ 15 Ե բազմութեան։ 25 Ե զլայնալիճն, թեեանն։ 31 Ե 1810 փխ. 1801, Ե Նինուէ շինեցաւ ի Ցելասուրէ ՌԼՃԴ։ 32-րդ տողը Ե չիք։ 34 Ե զԹարա։ 35 Ե ՌԼՃԾ փխ. 1905։ 37 Ե ՌԹՃՆԸ փխ. 1948։ 38 Ե ԲՌԼԳ փխ. 2033, ի չիք։

2046 Սոդոմ և Գոմոր երկնային հրոփն այրեցան։

2047 Թլփատութիւն հրամայեցաւ ի տեառնէ յաստուծոյ Աբրահամու։

2048 Աբրահամ ծնաւ զԻսահակ։

5 2108 Իսահակ ծնաւ զՅակոբ։

2198 Յակոբ ծնաւ զՅովսէփ։

2227 Յովսէփ մեկնեաց զտեսիլն փարաւոնի։

2237 Յակոբ նահապետն պանդխտեցաւ երկրին Փամայ։

2372 ծնաւ Մովսէս։

10 2452 Մովսէս մարգարէ եղև ազատիչ ազգին Իսրաէլի։

Ի ժամանակին Նինոսի, յամին 1905, էր Արամ, որդի Արեմանեկայ, թոռն Հայկայ։ Սայ եղև այր պաատերազմօղ և աշխարհասէր։ որ սիրելով զհայրենիս իւր, լաւ համարէր մեռանիլ ի վերայ ազգի, քան թէ օտար ազանց թշնամեաց կոխել զսահմանս

15 իւր։ Սա։ ելեալ ի պատերազմ բազմօք, քաջ արամբք յարևելս կոյս, երթեալ պատահէ Մեսացւոց զօրաց, որոց զօրավարին Մաղէս անուն կոչեցելոյ, որ էր այր հպարտ և պաատերազմօղ։ Եկեալ ի սահմանս Հայոց և սմբակակոխ արարեալ ծառայեցոյց ամս ինչ։ Յայնմ ժամանակի հասեալ ի վերայ նորա Արամայ

20 զօրօք բազմօք, սատակէ զզօրս նորա և զզօրավարն ձերբակալ արարեալ բերէ յԱրմաւիր և անդ ցից վարսեալ երկաթի ընդ ճակատ նորա և հրամայէ դնել ի վերայ պարսպին ի տեսիլ անցաւորաց։ Եւ ինքն խաղայ զօրօք զկողմամբն Ասորեստանեաց և գտանէ անդ զապականիչս երկրին իւրոյ Թ (9) բիւր հեծելոց և

25 հետևակաց զօրաց և ճակատ տուեալ պատերազմաւ սատակէ սպառ զզօրսն և զ՚արձամ զգլխաւոր նոցա։ Զսա իբրև զաստուած ‖ պաշտել ասեն Ասորիք ժամանակս բազումս։ Եւ յանդրէն խաղացեալ գնայ յարևմուտս կոյս ի Կեսարիայ, Կապադովկացւոց և պատահէ Գայապիս արքայի, որ բռնեցեալ ունէր զմիջոցս երկուց, այսինքն՝ Պոնտոսի և Ովկիանոսի և դիմի հարեալ յաղթէ բռնաւորին և զզօրս նորա բնաջինջ արարեալ բառնայ ի միջոյ։ Եւ այսպէս ընդարձակեալ դասմանս Հայոց քաջութեամբն իւրով, մինչ դի ամենայն ազգք ի յանուն Արամայ Արմէն կոչեն զհայ ազգ։ Եւ զկնի Արամայ, որդի նորա Արայն Գեղեցիկ ելիբէ

35 Հայոց։ Եւ զկնի Բէլայ թագաւորէ Նինոս յամս 52։ Ի սորա 45 ամին ծնանի Թարա զԱբրահամ։ Եւ կինն Նինոսի վաճաշն այն և բորբորիտոնն Շամիրամ, փախուցանէ զայր իւր զՆինոս ի Կրիտայ կղզին և ինքն ժառանգէ զթագաւորութիւնն առն իւրոյ։ Լուեալ ի բազմաց զգեղեցկութիւն Արային, առաքէ զՀրեշտակս առ Արայն Գեղեցիկ բազում ընծայիւք աղաչել զնայ, դի կատա-

80ա

---

1 Բ ՍԽԶ փխ. 2046, 5 չիք, հրով։ 2 Բ ՍԽԷ փխ. 2047։ 4 Բ ՍԽԸ փխ. 2048։ 5—8-րդ տողերը Բ չիք։ 9 Բ ՍՃՀԲ փխ. 2372։ 10 Բ ՍՆԾԲ փխ. 2452։ 11 ԲԲ ժամանակի, Բ ՌԹՃՆ յամին փխ. յամին 1905։ 11—12 Բ Արամանեկա, Բ Արամանեկայ։ 12 Բ Սա, այր չիք, պաատերազմող։ 14 Բ կոխել զթշնամիս։ 17 Բ կոչեցելոյ։ 18 Բ ծառայեցոյ։ 20 Բ զօրավարն։ 23 Բ Ասորեստանեայց։ 30 Բ Ովկիանոսի։ 33 Բ մինչև։ 35 Բ Բէլա։ 36 Բ վաճաշն։ 39 Բ Սա լուեալ։ 40 Բ գնա։

ըեսդէ զկամս նորա, կամ առնուլ զնա ի կնութիւն և. ասիրել թա-
գաւորութեան նորա, կամ կատարել զվավաշ ցանկութիւն նորա։
Եւ դառնալ յանդրէն բաղում պարգևօք ի յերկիր իւր, որում ոչ
հաւանեալ Արայի։ Իսկ Շամբուշն այն առեալ դրդմութիւն դո-
5 բաց իւրոց դայ հասանէ ի սահմանս Արային, որ ի պատերազ-
մին մեռանի։ Եւ զօրք նորին, Արայի մինչդեռ կամէին միւս
անգամ տալ ճակատ պատերազմի ընդ Շամիրամայ, ասէ Շա-
միրամ՝ Արայն Գեղեցիկ ոչ է մեռեալ, այլ կայ կենդանի ընդ
իս. և հաւատացեալ զօրացն Արայի իւաղաղացան։ Եւ այնուհետև
10 սկսեալ Շամիրամայ շինել զքաղաքս բաղումս և զտեղիս և շինէ
զարմանալի շինուածով զՇամիրամ քաղաք, որ է Վան և զնէ
զաթոռ իւր անդ։[1]

2889 Սաւուղ եղև առաջին թագաւոր Իսրաէլի։

2961 եղև շինուած տաճարին Սողոմոնի։

15 3140 եղև վաղճան ինքնակալ թագաւորութեան Ասորոց ի
Սարդանապալոյ։

3210 եղև հիմնարկութեան Հռոմայ։

3239 եղև վաղճան թագաւորութեան Երբայեցւոց։

3372 եղև գերութիւնն Երբայեցւոց ի Բաբիլոն։

20 3402 եղև առաջին թագաւոր Կիւրոս Պարսից։

3442 Դարեհ արքայն Պարսից աղատեաց զազգն Իսրաէլի։

3444 եղև վաղճան թագաւորութեանն Բաբելացւոց։

3623 Աղէքսանդր Մակեդոնացի ‖ եդ զինքնակալութիւն իւր 80բ
ի մէջ Յունաց։ Իսկ ըստ Հայոց ի սոյն ժամանակի, յետ մահ-
25 ուանն Արայի, պայազատէ որդի նորա Կարդոս[8] և որդի սորա
Պարոյր,[9] առաջին թագաւոր Հայոց, պըսակեալ ի Վարբակայ Մա-
րաց առաջի թագաւորէն։[10] Եւ գեղեցկադէս վկայ ունի զմար-
գարէն Երեմիայի, որ ի բանս իւր հրաւիրէ ընդդէմ Բաբելոնի
ի պատերազմ՝ հրաման տուր, ասէ, Աբարատեան թագաւորու-
30 թեան և Աղգա[նա]զ[ա]ն գնային։[11] Այլ զկնի սորա Հոաչեայ թա-
գաւորէ Հայոց։ Եւ սորա ասեն, զմի ի գերելոցն գլխաւորաց Եր-
բայեցւոցն, խնգրեալ ի Նաբուգոդոնոսորայ անուն Շամբաթ
ածեալ բնակեցուցանէ յերկրին Հայոց մեծաւ պատուով և ի սմա-
նէ ասեն ազգն Բագրատունեաց. և հաւատի է։[12] Եւ յետ սորա
35 թագաւորէ Տիգրան, որ դաշնաւորեալ ընդ արքային Մարաց Աժ-
դահակայ, տայ նմա զքոյր իւր Տիգրանուհի ի կրնութիւն։ Եւ
Աժդահակայ նենգեալ դաւաճանութեամբ ի վերայ Տիգրանայ
չար խորհեալ նմա, զոր իմացեալ օրիորդին Տիգրանուհւոյ, ազդ

---

3 Б յորում։ 9 Б յիս։ 12 Б անդ զաթոռ իւր։ 13 Б ամին 2289 փխ. 2889։ 14 Б ամին 2961 փխ. 2661, Սողոմոնի։ 15 Б ամին 3170 փխ. 3140, վախճան։ 16 Б Սանդանապալոյ։ 17 Б ամին 3210 փխ. 3210, հիմնարկութեանն։ 18 Б ամին 3239 փխ. 3239, վախճան թագաւորութեանն երբրայեցւոց։ 19 Б ամին 3372 փխ. 3372, երբաեցւոց։ 20 Б ամին 3402 փխ. 3402։ 21 Б ամին 3442 փխ. 3442, զա[գ]ն Իսրաելի զալ երուսաղէմ փխ. զազգն Իսրաէլի։ 22 Б ամին 3444 փխ. 3444, վախճան։ 23 Б իւր չիք։ 24 Б «Իսկ ըստ հայոց»-ից առաջ վերնագիր՝ «Վասն Հայոց»։ 28 Б Բարիլոնի։ 30 Б Աղգա[նա]զան, հոչեաւ։ 31—32 Б երբրաեցւոց։ 33 Б երկրին, զսա փխ. ի սմանէ։ 36 Б զքոյր զՏիգրանուհի։ 38 Б Տիգրանուհոյ։

առնէ եղրօր իւրում զխորամանկութիւն առն իւրոյ։ Եւ իբրև
լուաւ զրանս արքայն Տիգրան, զօրու ծանու խաղայ և հասանէ
ի վերայ Աժդահակայ։ Ի խմբել պատերազմին նիզակաւ օրինակ
իմն, որպէս ջուր հերձեալ զերկաթ ի հանդերձն շամփրէ. զԱժ-
5 դահակ յընդարձակ աչդ նիզակին և յամփոփել միւս անդամ
ոձեոն արտաքս ղկէս մասին թոքոցն հանդերձ զինուն ի դուրս
բերէ։ Իսկ վաղճան գործոյն առնէր մահն Աժդահակայ։ Զայս և
զայլ բազում յաղթութիւնս արարեալ խարաեաշս այս և աղդերեկ
ծայրիւ հերուաց Երուանդեանս Տիգրան, երեսօք գունեան և
10 մեղուակն անձնեղ և թիկնաւէտն, առոյգաբարձ և գեղեցկոտն,
պարկեշտ ի կերակուրս և յըմպելիս և առ խրախճանութիւնս, օրի-
նաւոր մեծիմաստ և պերճաբան և ամենայն որ ինչ մարդկու-
թեանս պիտանի։ Զի սա ամենեցունց թագաւորացն մերոց
հարստագոյն և խոհեմագոյն այր արանց գլուխ արութեան ցուց-
15 եալ զաղգս մեր բարձրացոյց || և ընդ լծով կացեալս լծաղիրս 81ա
արար բաղմաց և հարկապահանջս կացոյց՝ մթերս ոսկւոյ և ար-
ծաթւոյ և քարանց պատուականաց. և զդեստուց և պէսպէս գու-
նից և անկուածոց արանց միանդամայն ե կանանց հասարակաց
բաղմացոյց ագեղագոյնքն, իբրև զդեղաւոր երևէին գեղեցիկք և
20 գեղաւորքն։ Ըստ ժամանակին առ հասարակք գիւցազանց հե-
տեամարաքն ի վերայ ուսուց ձիոց բերեալք և պարսաւորքն առ
հասարակ դիպ աղեղունք և շեշտաւորք ի սուսեր և ի նիզակ վառ-
եալք մերկքն վահանօք և զգեստիւք երկաթեօք պարսածածկեալք.
զինուց փայլմունք և շողիւք զթշնամիս արտահալածէր։ Սորա
25 լեալք որդիք երեք՝ Բար, Տիրան և Վահակն, որ ընդ վիշապի
կռուեալ նմա և յաղթեալ կարի իմն նմանագոյնս զՀերակլեա
նահատակութիւնս նմա երգեն. այլ ասեն զսա և ասաուածաց-
եալ և անդր ի Վրաց աշխարհին կանգնեալ դչափ հասակի նորա
պատուէին պահօք։ Սա ընդվզեալ մեռանի յԱղէքսանդրէ Մակեդո-
30 նացւոյ և յայսմ հետէ դադարէ թագաւորութիւնն Հայկազունեաց
մինչև ցթագաւորութիւնն Վաղարշակայ Արշակունւոյ։[13]

3797 եղև վաղճան թագաւորութեանն Մակեդոնացւոց առ
Պէրսէիս արքայիւ։

3802[14] Անտիոքոս թագաւոր էառ զԵրուսաղէմ։

35 3804 Յուդայ Մակաբայեցի եղև այր հզօր զօրութեամբ ի
մրցմունս պատերազմի։

3912 Յուլիոս առաջին թագաւոր Հռոմայեցւոց եղև կայսր
և յաղթեաց Պոմպէի զօրավարին։

---

2 Б Տիգրան արքայն յայնժամ։ 3 Б խմպել։ 4 Б հերձեալ։ 4—5 Б զԱշտահակ։ 7 Б վախճան գործոցն, գմահն։ 10—11 Б գեղեցկոտն պարզեշ։ 11 Б յըմբելիս։ 13 սա չիք։ 15 Б ազգս։16 Б ոսկոյ։ 16 –17 Б արծաթոյ։ 18 Б հասարակաց։ 23—23 Б ի սուսեր և ի նիզակ վառեալք չիք։ 23 Б երկաթվօք։ 25 Б 3 փխ. երեք, Բար փխ. Բար։ 26 Б և զՀերակլա։ 28 Б զանգնեալ։ 32 Б ամին 3797 փխ. 3797, և վախճան փխ. եղև վաղճան, թագաւորութեան։ 34 Б ամին 1802 փխ. 3804, Անտիոքոս։ 35 Б ամին 1804 փխ. 3804։

3918 Օքթաւիանոս, որ և Դայիոս, թոռն Յուլիոս, կայսեր եղև։ Օգոստոս կայսր Հռոմայեցւոց ի թագաւորութեան սորին ծնանի Քրիստոս ի Բեթղէհէմ Հրէաստանի։

3925 Հերովդէս այլազգի եղև առաջին թագաւոր Հրէից։ Առ
5 այսու ժամանակաւ եկին մոգք յարևելից Յերուսաղէմ առ ի երկրպագութիւն նորածին թագաւորին Քրիստոսի։

Ամք ի ծննդենէն Քրիստոսի[16]

1 ծնաւ Քրիստոս փրկիչն մեր ի սրբուհւոյ կուսէն Մարիամայ։

10 2 դառնայ մանուկն Յիսուս Քրիստոս ի Յեգիպտոսէ ի Գալիլեայ։

12 զաին ծնողքն զմանուկն Յիսուս Յերուսաղէմ ի մէջ 81բ
վարդապետաց ի տաճարին։

30 գայ Յիսուս ի մկրտութիւն առ Յովհաննէս և ընտրէ
15 զերկոտասան զառաքեալսն և յետ երից ամաց գայ ի չարչարանս և մեռանի։

35 սուրբ առաքեալն Պօղոս դառնայ ի հաւատս Քրիստոսի։

44 սուրբ առաքեալն Պետրոս նախ հաստատէ զաթոռ հայրապետութեան ի Յանտիոք և ապա գնէ զաթոռ ի Հռոմ։

20 45 եղև վերափոխումն սրբուհւոյ Աստուածածնին։

56 սուրբն Մարկոս եղև առաջին եպիսկոպոս ի Յազէքանդրիայ։

67 եղև առաջին հալածումն քրիստոնէից ի Ներոնէ։

68 սուրբ առաքեալքն Պետրոս և Պօղոս եղեն մարտիրոսք
25 ի Հռոմայ։

73 եղև աւերումն Յերուսաղէմի ի Վէսպիանոսէ թագաւորէն։[16] Ի ծննդենէն Քրիստոսի մինչև ի մեծն Կոստանդիանոս են ամք 313։[17]

318 եղև առաջին ժողովն ի Նիկիայ ընդդէմ Արիոսի։[18]

30 319 գիւտ սրբոյ խաչին փրկչական Յերուսաղէմ ի Հելինայ, մօրէն Կոստանդիանոսի մեծի։

331 Կոստանդիանոս շինեաց զԿոստանդինուպոլիս։

383 եղև երկրորդ ժողով ի Կոստանդինուպոլիս։[19]

402 Հռոմ առաւ ի Գոթացւոց։[20]

35 420 Թէոդամօնդոս եղև առաջին թագաւոր ի Գալիլացւոց։

421 եղև սկիզբն շինուածոյն Վէնէտիկոյ։

---

1 Б Յուլիոսի։ 4 Б ամին 3925 փխ. 3925, В 3925 չիք, Б Հերոդէս։ 5—6 Б յերկրպագութիւն։ 7 Б ամք ի սուրբ ծննդենէն Քրիստոսի թուի։ 8 Б սուրբ փխ. սրբուհւոյ։ 10—11 Б Գալիլիայ։ 14 Б ի Յորդանան առ Յովհաննէս։ 16 Б և մեռանի և յանէ յարութեամբ 33։ 17 Б ամին 35 փխ. 35, В Լե փխ. 35, Б Պողոս։ 18 Б ամին 44 փխ. 44, В ԽԴ փխ. 44։ 19 В գնե զաթոռ ի չիք, Եամ փխ. Հռոմ։ 20 Б ամին 45 փխ. 45, սուրբ։ 21 Б ամին 56 փխ. 56, եպիսկոպոս եղև։ 23 Б ամին 67 փխ, 67։ 24 Б ամին 68 փխ. 68, В ԿԸ փխ. 68։ 26 В ամին 73 փխ. 73, В ՀԳ փխ. 73, БВ Երուսաղէմի, Б Վիսպիանոսէ, Б Վեսպիանոսէ։ 28 В ԳՃԺԳ փխ. 313։ 29 Б ամին 318 փխ. 318, Նիկայ։ 30 Б Երուսաղէմ։ 31 Б Կոստանդոսի։ 32 Б Կոստանդինոս, В ԳՃԼԱ փխ. 331, В զԿոստանդիանուպոլիս, Б զԿոստանդինուպոլիս։ 33 Б Կոստանդինպոլիս։ 34 Б Հռոմ, Գոթացւոց։ 35 Б 402 փխ. 420, ի չիք։ 36 В ԳՃԻԱ փխ. 421, Б զկիսքն։

433 եղե. երրորդ ժողով ի Եփեսոս։[1]

455 եղև ժողովն Քաղկեդոնի։[2]

595 ծնաւ սուտ մարգարէն Մահմէտ։

615 դերուսաղէմ էառ Խոսրով արքայն Պարսից։

5 621 Մահմէտ եղև առաջին իշխան Հագարացւոց։

627 Մահմէտն զրեաց զՀուռանն։

636 դերուսաղէմ և զԴամասկոս առին Սարաճինացիք։[3]

801 Մեծն Կարլոս եղև կայսր ի Հռոմայ։[4]

964 աղգն Լէհաց ընդ իւրեանց[5] թագաւորին եղեն քրիս-

10 տոնեայք։[6]

968 զազարեաց թագաւորութիւն Իտալիոյ։[7]

975 սկիզբն եղև թագաւորութեանն Մաճարից։[8]

1013 Սարաճինացիք միանգամայն հալածեալք եղեն Իտա-

լիոյ ի ձեռն կայսեր։

15 1208 սուրբն Դոմինիկոս կացոյց զկարգ քարոզողաց։ 83ա

1240 Սարաճինացիք հալածեալք եղեն ի Սպանիոյ։[9]

1300 կարգեցաւ և կացուցաւ ամ յոբելեան ի Հռոմ։

1305 փափն ել ի Հռոմայու և գնաց ի քաղաքն Ավինիոն և

անդ. եղ զաթոռ հայրապետութեանն իւրոյ։[10]

20 1375 փափն փոխեաց զաթոռ հայրապետութեան իւրոյ ի

Ֆրանցոյ ի Հռոմ։

1397 Բայազիտ սուլթանն ըմբռնեցաւ ի Լանկ Թամուրէն։[11]

1453 Կոստանդինուպոլիս առաւ ի Թուրքաց։

1464 Բոսնայ առաւ ի Թուրքաց։

25 1473 Մահմէտ խոնդքարն էառ զՏրապիզոն և ձերբակալ

արար զկայսր Կալթիան։[12]

1480 Յոհաննէս Կորինպէրն եդիտ զտպագրութիւնն ի Մա-

կենցայ։[13]

1492 Հրէայք համանդամայն հալածեալք եղեն ի Սպանիոյ։

30 1503 Իսմայէլ Սոֆի եմոյծ զնոր աղանդ ի՝ն ի յաշխարհ։[14]

1517 Մարթին Լութէր սկսաւ մուծանել զիւր աղանդն ընդ-

դէմ ուղղափառ եկեղեցւոյ։

1523 Ըռաձոզ էառ սուլթան Սէլիմն։[15]

1526 Լուտովիկոս թագաւորն Մտջարաց սպանաւ ի Թուր-

35 քաց և կորոյս զիւր թագաւորութիւնն։[16]

1527 զօրքն Բորբոնի ասպատակեցին զՀռոմ։[17]

---

1 Բ Եփեսոսի ժողովն ՆԼԳ։ 2 Բ Քաղկեդոնին ՆԾԵ։ 3 Բ ծնաւ Մահմետ ՇՂԵ։ 4 Բ Խոստրով, 4-րդ տողը Բ չիք։ 5 Բ սուտ մարգարէն Մահմետ, Բ եղև առաջին իշխան հագարացոց Մէհմետն ՈՒԱ։ 6 Բ սնոտի օրինաց զղուռանն, Բ գրեաց զղուռանն ՈՒԷ։ 7 Բ Երուսաղէմ։ 9 Բ են փխ. եղեն։ 11 Բ թագաւորութիւնն։ 12 Բ 915 փխ. 975, թագաւորութեան։ 15 Բ զկարգ։ 18 Բ Հռոմայ։ 19 Բ ետ փխ. եգ, հայրապետութեան։ 20 Բ իւրոյ չիք։ 21 Բ Ֆրանցիոյ։ 23 Բ Կոստանդինուպոլիս։ 24 Բ Բոսնա։ 25 Բ խոնթքարն, ձերպակալ։ 27 Բ Կորենպէրն, Բ ՌԴՃԶ փխ. 1480, Կորինպերն։ 30 Բ ի չիք, աշխարհ։ 31—32 Բ ընդ փխ. ընդդէմ։ 32 Բ ՌԵՃԺԷ փխ. 1517, Բ ուղղափառ եկեղեցւոյ չիք։ 33 Բ Ըռատոզ։ 34 Բ Լուտովիկոս Մաճարաց։ 36 Բ Բորբոնի ասպա[տա]կեցին։

1575 եղև բաժանումն և մեծ աղմուկ խռովութեան ի Զէնուայ վասն հնոյ և նորայ աղդի և տոմարի։

1581 Հօլանդիայ ապստամբեցաւ ի Սպանիոյ։[38]

1582 Լատինացիք զնոր տոմար շինեցին։[39]

Արդ՝ աշխարհ զսկիզբն էառ ըստ Երբայեցւոց ի մարտի ամսոյ, յաւուր կիրակէի։ Եւ ի յիսկզբանէ աշխարհի մինչև ցայժմ, որ է թիւն մարդեղութեան փրկչին 1683, են ամք 6884։ Յառաջ քան զմարդեղութիւն բանին աստուծոյ էին ամք 5200։ Արդ՝ առաջին դարն զիսկիզբն առնու ի ստեղծմանէ Ադամայ և անէ մինչև ի ջրհեղեղն. ներբայսքան ժամանակի ոչ տեղեաց անձրև ի վերայ երկրի և ոչ կերաւ միս, և տևեաց դամս 2242։[40] || Երկրորդ դարն տևեաց ի Նոյէ մինչև ծնունդն Աբրահամու. և են ամք 943։[41] Երրորդ դարն լինի ի ծննդենէն Աբրահամու մինչև ի ծնունդն Դաւթի և լինին ամք 153։[42] Չորրորդ դարն առնու զսկիզբն ի Դաւթէ մինչև ի գերութիւնն Երբայեցւոց ի Բաբիլոն և են ամք 485։ Հինգերորդ դարն ի գերութենէն մինչև ի ծնունդն Քրիստոսի և են ամք 598։ Վեցերորդ դարն, որ է վերջին, առնու զիսկիզբն ի ծննդենէն Քրիստոսի և տևէ ցոյս։ վարդապետաց կարծեաց մինչև ի յեօթներորդ դարն, որ լինի եօթն հազար ամ և յայնժամ լինի վաղճան աշխարհի։ Եւ յետ 550[43] ամաց ղկնի մարդեղութեան փրկչին Յիսուսի, ծնաւ Մահմէտն, և յետ 700 ամաց սկսաւ աղանդն Թուրքաց։

Ի թուին մարդեղութեանն Քրիստոսի 1358[44] ի յարևելս կոյս անկան առ ի վերուստ, ի յերկնից, այնքան բաղմութիւնք շնչոց կենդանեաց ի յերկիր և ի նոյն ժամայն սաստակեալք դաղրալի և դարշելի հոտովք տպականեցին զօդն. և եղև սաստիկ մահ սարսաժամ և տևեաց դամս ղերիս։ Եւ. յետ այսր ամենայնի ի կողմանն հիւսիսոյ երևեցաւ դիսաւոր աստղ մի և ապա եկն հողմն տապախառն այնքան սաստիկ մինչ զի բաղումք ի կենդանեաց մեռան։

Եւ ի Սպանիայ երևեցաւ սիւն մի հրեղէն ի յերկինս և եղև շարժ ահագին։

1378 առաւ Յերուսաղէմ ի թշնամեացն Քրիստոսի։

1383 դտին դարհեստ թօփի և թֆանկի. դայս դործ, քան զամենայն յառաջ, Վէնէտիկցիք ի կիր առին ընդդէմ Զէնուիզաւոց։

1582 դտեալ եղև նոր աշխարհ, որ է յարևմտական Հնդստան ի Քրիստափորէ Կոլումպէ Զէնուիզացւոց։[45] Եւ այլք ասեն եթէ ի թուին 1497 Ամէրիկոս Վէսպիճինոսն եղիտ զնոր աշխարհն Հընդկտց։

---

1 Ֆ մեծ և, խռովութեան։ 2 Ֆ Ռեձձ փխ. 1581։ 4 Ֆ Ռեձձ փխ. 1582։ 6 կիւրակէի։ 7 որ է թիւն մարդեղութեան փրկչին 1683 չիք։ 12 ցծնունդն։ 14 են փխ. լինին։ 15 Յերբաեցւոց։ 16 և են չիք։ 17 568 փխ. 598, Զ-երորդ։ 18 զսկիզբն։ 19 7 փխ եօթն։ 20 վախճան։ 21 և յետ չիք։ 22 ե սկսաւ աղանդն թուրքաց որք են ամք 700։ 27 3 փխ. զերիս։ 29 մինչև։ 31 երկինս։ 33 են ամք 1378 փխ, 1378, Երուսաղէմ։ 34 1582 փխ. 1383, այս, նախքան փխ. քան։ 35 Զէնուրիզացւոց։ 36 1583[46] փխ. 1582։ 37 Ջէնուիզացւոյ, թէ փխ. եթէ։ 38 ի թուին Քրիստոսի, Ամէրկիոս։

Են և այլք բազումք զարմանալիք որք եղեն ի վերայ երկրի, 83ա
զորոց զսակաւ ինչ շարագրեցաք ասա:

Ի թուին 1369 եղև այնպիսի մեծ դիզացումն ջուրց ծովուն, մինչ զի ելեալ ի սահմանաց իւրոց ընդ 3000 քայլս և ապականեաց զդաշտում տեղիս։ Եւ զկնի երկրաշարժ, անձրև սաստիկ, կայծակունք և արար զվնասս բազումս։ Ի Կոստանդինուպօլսի եղև այնպիսի մահ տարաժամ, մինչ զի սակաւ սմանք մնացին։ Եւ ի յամսեանն Հոկտեմբերի եղև յուրբ սաստիկ սառնամանեաց ի բազում անդիս, և ծովն Պոնտոսի պաղեցաւ մինչև ի 400 միլս. ե յետոյ անդնաց ի վերայ երկրի ձիւն 39 կանգուն և մնաց մինչև ի յամիսն փետրվարի. և. յամաքեցան գետք և աղբիւրք։ Եւ թուրք անցին ընդ զրունս Կասբից ի Հայաստան։

Ի թուին 1520 անկան յերկնից 1200 քարինք մեծամեծք, մինչ զի մինն ի նոցանէ կշռիւր 160 լաերս և այլքն ոմն 60 և ոմն աւելի և ոմն պակաս և ունէին զդոյն երկաթի և զոմա ծծմբոյ։

1471 թուրքն էառ զՆէգրոպոնթ[47] և ետ բազում վնասս և զտարուածս քրիստոնէից։ Եւ ի յայսմ ամի ի Բրէշայ[48] կին մի ծնաւ զկատու և նկաց ամիսս վնց և մեռաւ։ Ներայսմ ամի եղև շարժումն մեծ, որսաումն, կարկուտ և կայծակունք յոյժ սաստիկ և ապականեաց զամենայն պտղաբերս և զբոյսս երկրի և ոսկան զբազումս ի կենդանեաց և ի մարդկանէ. և կարկուտքն այնքան մեծամեծք, մինչ զի մինն ի նոցանէ կշռիւր լաերս 25։ Եւ քար մի անկաւ ի յերկնից, որ կշռիւր լաերս 1000։

1494 եղև այնպիսի սաստիկ անձրև ի Իտալիայ, մինչ զի 400.000 մարդիկք ջրասուղեալք մեռան և բազումք քակտեալք աւերեցան։

1498 ի Միլան քաղաքի տեսին զերիս արեգակս. և ի գիշերի տեսին զդաշտում հեծեալս, ընդ ընթանալն ի յօդս և բազումք մարդակերպք կենդանիք պատերազմել ընդ ‖ միմեանս։ Եւ կին մի ծնաւ զերկուս զաւակս, կցեալս ընդ միմեանս, դաբու և զէգ և երկաքանչիւր ունէր զդ (4) բարձս և զդ (4) բազուկս։ Եւ ի նոյն ժամանակի ծնաւ կին մի ի Յալամանս զորդի, որ ունէր զի (2) գլուխս, զդ (4) ձեռս և զվեց զականջս։ Եւ կին մի եղև ընդ տուն իւրում զամս ժ (10) և յետոյ փոխեցաւ ի բնութենէ կանայի և եղև այր։ 83բ

1502 Լուտովիկոս[49] թագաւորն Ֆրանցացոյ դուխտ ետ ընդ թագաւորին Ըսպանիոյ, առնուլ զթագաւորութիւնն Ֆէրդինանդոյ, թագաւորին Նապոլոյ և բաժանել ընդ իւրեանցս։ Եւ երկաքանչիւր առնուլ զբաժին իւր։ Եւ ի բաժանելն ոչ միաբանե-

---

1 և են։ 2 սակաւ։ 3 այս եղև ի թուին 1369 փխ. ի թուին 1369։ 3 գիզեցումն։ 4 մինչև։ 6 Կոստանդնիպօլսի։ 7 ի չիք։ 8 հոգեմարերի։ 12 Կասպից։ 14 մինչև, զի չիք։ 15 հոտ։ 17 Ի Բրէշայ չիք։ 18 կատու, 6 փխ. վեց։ 19 կարկուտ չիք։ 21 ի [կենդանեաց] չիք։ 22 նոցունց փխ. նոցանէ։ 23 ի չիք։ 24 1498 թուին փխ. 1494, ի չիք։ 25 բազում, գիւղորայք քակտեալք։ 28 բազում։ 29 պատերազմել։ 31 իւրաքանչիւր։ 32 զոր, Ի փխ զի։ 33 զԶ փխ. զվեց։ 34 10 փխ ժ։ 35 և եղև այր ամենայն անգամօք։ 36 Ֆրանցացոց, եղեալ փխ. եաւ։ 37 Սպանիոյ։ 38 բաժանելն, իւրեանս։

ցան և յարեան ի վերայ միմեանց ի պատերազմ և յաղթեցաւ թագաւորն Ֆրանցոյ և մնաց թագաւորութիւնն ի ձեռն թագաւորին Հսպանիոյ։[50]

1515 սուլթան Սէլիմն ձերբակալ արար զՄսրա սուլթանն
5 և էառ զամենայն թագաւորութիւնս նորա։[51]

1541 հինգերորդ Կառլս թագաւորն[52] մեծաւ զօրութեամբ զընաց ի վերայ Ջազայիրին, զմեծ նաւակոծութիւնս կրեաց՝ 70 նաւք ընկղմեցան և դարձաւ։

1566 ի Ֆրանցայ երևեցաւ կենդանակերպ մի աննման կեն-
10 դանեաց, որ ունէր զղլուխ մայմոնի, զականջս ընծոյ, զեղջիւրս խոյոյ, զաչս բուի, զաուա օձի և զմարմին մարդոյ, բայց թուամորթ և ոտք ձիոյ։ Ի նոյնում ամի ի յերկիրն Ինկլիզաց լեառն մի մեծ վերացաւ ի տեղւոջէ իւրմէ և եկաց[53] յայլում տեղի։ Եւ ի Սպանիայ էին մի յեա 16 ամի ի կանացի բնու-
15 թենէ փոխեցաւ ի յայրական բնութիւն ըստ ամենայն անդամոց։

1568 ի Տրապիզոն քաղաքի, մերձ առ ծովն Պոնտոսի, յաւուր միում, ի յերրորդ ժամուն ի լինիլ օդոյն պարզ և պայծառ երևեցան 3 արեգակք։ Եւ ի վերա նորա աղեղ ամպեղէն և կացին և մնացին զերիս ժամս։ Եւ յետ այնորիկ մինն չոգաւ դէպ
20 յարևելս և միւսն յարևմուտս և մնաց առաջի արեգակն ի ‖ բնա- 84ա
կան ընթացմունս իւր։ Եւ յետ ոչ բազում աւուրց ի նոյն տեղւոջն ուր երևեցան արեգակքն երևեցաւ լոյս մեծ և պայծառ և թաւ մի ընդ լուսոյն և աստղ մի յոյժ մեծ և պայծառ և այս նշան եղև ի մէջ զիշերի։

25 1571 Դոնջիվան զի Աւուստիոնն, եղբայր թագաւորին Սպանիոյ միաբանեալ հետ Փիոյ փափին և Վէնէտիկացւոց, ել բազումք նաւօք ընդդէմ Թուրքաց և յաղթեաց նոցա քաջապէս և դարձաւ յաղթութեամբ։[54]

1577 թագաւորք Փորթուկալին բազում անգամ, բառում զո-
30 րօք յարեան ի վերայ Արաբացւոց, որ մերձ է առ նոսա և կոչին Մարօքօ և Ֆէսա և բազում պատերազմ պատերազմեցան, բայց ոչ ինչ օգտեցան և անկան անդրէն 3 թագաւորք և զօրք բազումք իւրեանց։ Երկիրն այն Աֆրիկա կոչի։

Են և այլք ինչք բազում զարմանալիք, զորոց զանկաւս շա-
35 բաւգրեցից յետ ծննդեանն Քրիստոսի։

Եւ յաւուր ծննդեանն Քրիստոսի, որ էր օր կիրակէի, ի Հռոմ աղբիւր մի բղխեաց զձէթ զերիս տիւս և զերիս գիշերս։ Եւ երևեցաւ շուրջ զարեգակամբն մանեակ մի ոսկի, և յետոյ երևեցան 3 արեգակք և յայնմ աւուր անկաւ տաճարն խաղաղութեան և բագինն Ռոմուլայ, որ հիմնադիր էր Հռոմայ։ Եւ երևեցաւ ասաղ

---

3 Սպանիոյ։ 6 Կարլս։ 7 դնաց։ 8 դարձաւ յետս։ 9 Ֆրանցիայ։ 16 զեղջուրս։ 12 և ի նոյնում։ 14 և ի չիք։ 15 այրական։ 16 Տրապիզոն, ծովն։ 17 յօդոյն։ 18 նորա չիք։ 18 և [կացին] չիք։ 19 չոքաւ։ 25 Այս ի թուին 1571 փխ. 1571, Դոնջիվանի զի Աւուստրիոնն։ 26 զհետ, բազում։ 27 նաւուք, նոցայ։ 28 յաղթութեամբն։ 29 Այս եղև թուին 1577 փխ. 1577։ 33 Աֆրիկայ։ 34 բազումք։ 38 եր[և]եցաւ։ 40 Հռոմուլայ։

մի յոյժ պայծառ և լուսաւոր ի վերայ Բեթլէհէմի, ի վերայ մսրոյն, ուր ծնաւ Քրիստոս և ամենայն բաղինք ի Յեգիպտոս անեալ յերկիր կործանեցան։

200 ի Հռոմայ երևեցան ի յօդս բազում բաղինք, որք պա-
5 տերազմէին ընդ միմեանս և լոելի լինէին ճայթմունք և բոն-
բիւնք զարհուրելիք և կայծակ էհար զդիս Լուսնթագի և մանրեաց
և դթէաարօնն Պոմպէի հրդեհեալ փլոյց։ Եւ ի նոյնում ժամանակի
ի Կանդիայ[5] դին Լուսնթագի խօսեցաւ մարդկային բարբառով։
Եւ ծնաւ անդ մանուկ մի, որ ունէր զԲ (2) գլուխս։ Եւ ի Հռոմ
10 եղև շարժ մի մեծ և քակտեցան տունք և ապարանք աւելի քան
զհազար։ Եւ ծովն ելեալ ի սահմանաց ծածկեաց զրազում քաղաքս։
Եւ արեգակն խաւարեցաւ բազում աւուրս մինչ զի լուսով ճրա-
գի շրջէին մարդիկք։

Եւ յերկրաշարժէ դեօթն քաղաքս տապալեաց, || շուրջ զԱն- 84բ
15 տիոք քաղաքաւ։ Ե[ւ] ի Ֆրանցիայ տեղեաց քար յերկնից։ Եւ
ի Ասորեստան երևեցաւ իսաչ մի մեծ ի բազում աւուրս ի յօդն։

Եւ ի Անդրիանուպօլսի տեղեաց արիւն յոյժ սաստիկ։ Եւ ի Արարիայ տեղեաց բուրթ բազում յոյժ։

326 եղև սաստիկ զարհուրելի երկրաշարժ ընդ ամենայն
20 երկիր և քաղաքն Նէսիայ բոլորովին քակտեցաւ այնպէս, մինչ
զի ոչ ինչ նշան մնաց քաղաքի և ծովն ելեալ ծածկեաց։

Եւ ի Սիճիլիայ կղզոյն բազում քաղաքք զանբաւելի վնաս կրեցին։ Եւ ի Կոսանդինուպօլսի եղև յոյժ սաստիկ հողմուռուցիչ և ամպահարութիւն և մրրիկ, անձրև ոստոստդին, մինչ զի
25 սպտն աւելի քան զԺՌ (10,000) մարդս։

Եւ ի Յերուսաղէմ տաճարն Սողոմոնի անկեալ քակտեցաւ։ Եւ ի յերկրորդում աւուր էջ հուր երկնից և էկէղ զնա, մինչև զերկաթեղէն զինչս կիդեալ ահի[ւ]ն դարձոյց։ Եւ երկուցեալ հրէիցն բազումք դարձան ի հաւատս Քրիստոսի։

30 172 ի Կոստանդինուպօլսի եղև շարժումն այնպիսի սաստիկ մինչ զի քաղաքին կէսն քակտեցաւ. ի քաղաքին Անթէպրատայ, ի Ռումէլի յերկրին, ի յառաւօտու ժամուն մինչև ցերեկոյեան ժամն տեղեաց բուրթ ի վերուստ՝ յերկնից և եղև խաւար բազում աւուրս։ Եւ ապա երևեցաւ սիւն մի հրեղէն ի յերկինս
35 թռուցեալ և երկինքն երևէր իբրև հուր վառեալ։ Եւ Իտալիայ եղև շարժ և կործանեաց զրազում քաղաքս։ Եւ քաղաք մի ի Կալապրիայ ինքնըստինքեան այրեցաւ զերիս աւուրս և ոչ եղև հնար անցուցանելոյ զհուրն։

---

1 Բէթղհէմի։ 3 երկիր։ 4 200 չիք։ 5 բոմբիւնք։ 7 Պոմպէի։ 9 Հռոմ։ 11 սահմանեաց։ 14 երկրաշարժէ, 7 փխ. դեօթն։ 15 երկնից։ 17 ի [Անդրիանուպօլսի], չիք։ 18 յԱրաբիայ, բուրբ փխ. բուրթ։ 10 360 օր, երկրաշարժութիւն։ 20 քակեցաւ։ 21 ի քաղաքի, ծովն։ 22 ի չիք, Սիճիլեա, քաղաք։ 23 ի չիք, Կոստանդինուպօլիս, հողմուռուցիկ, սաստկադին։ 20 Երուսաղեմ, քակեցաւ։ 27 ի [յերկրորդում] չիք, երկրորդումն, մինչ։ 28 և չիք։ 30 Կոստանդնուպօլսի։ 31 ի քաղաքին, քակեցաւ։ 32 ժամոյն։ 33 բուրբ փխ. բուրթ, երկնից։ 35 զհուր, ի Իտաիլայ։ 36 զրազում։

432 ի Կոստանդինուպոլսի եղև շարժ և աւեաց դամիսս 6։ Եւ յետ այնորիկ երևեցաւ մանուկ մի սքանչելեօք, որ ասէր թէ պարտ է երդել զերդս դայս առ ի դադարեցուցանել զշարժն՝ «Սուրբ աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, ողորմեա մեզ։»[66] Եւ ընդ[ուն] երգելն նոցա զայս երգ, նոյն ժամայն դադարեցաւ շարժն։ Եւ ի Արաբիայ տեսին զբազում շունչ կենդանի ի յօդս։ Եւ ի դաւառին Ֆիլոբէնցոյ, յաւուր միում ի վազորդենէ մինչև || ցերեկոյ, ըզխեաց արիւն ի յերկրէ, ի քաղաքին որ կոչի Թոսկանայ։ Ի Կոստանդինուպոլսի տեղեաց աճիւն։ 85ա

532[67] ի Միլան եղև սով մեծ, մինչ զի կանայք գօրգիս իւրեանց կերան։ Եւ ի քաղաքին, որ կոչի Վէրչէլում ծնաւ էշ մի, որ ունէր զերեսս մարդոյ և զականջս իշոյ։

530 ի Իտալիայ եղև սով սաստիկ, մինչ զի մարդիկ զմիմեանս ուտէին և ծնօղք՝ զղաւակս։ Եւ ի Հռոմ ձայն սոսկալի լինէր և արեգակն ամ մի սակաւ մի տայր զլոյս իւր և եղև սով ի յընթանուր տիեզերս։

595 ի Հռոմ եղև մահ։ Եւ ի յօդս երևէին մարդիկ սպառազինեալք, որք պատերազմէին ընդ միմեանս։ Եւ եղև հողմ սաստիկ և աապալեաց զբազում շինուածս և զընակութիւնս և Իտալիայ ճնաց սակաւ բնակութիւն։

547 ի դաւառին Թոսկանտայ, ի Իտալիայ տիղնաց արիւն ի յերկնից ի միջօրէի։ Եւ արեգակն խաւարեցաւ և երկիր երէրէր։ Եւ ի Հռոմ ծնաւ երեխայ մի, որ ունէր զԲ (2) գլուխս և զմօրուս։ Ի Կոստանդինուպոլսի, ի Կալապրիայ և ի յայլ տեղեաց ցորեան և ի Հռոմ սունկք։

761 եղև այնքան սաստիկ ձմեռն և ցուրտ անազին թէ ի յարևելս և թէ յարևմուտս, մինչ զի ծովք և դետք, ծովակք և լիճք սառեցան և բազումք մեռան։ Եւ ի յամառնային եղանակին եղև այնքան սաստիկ տօթ և ջերմութիւն, մինչ զի դետք և ազբիւրք ցամաքեալ չօրացան, նրմանապէս բոյսք և տունկք. և մեռան բազումք ի կենդանեաց և ի մարդկանց։

778 ի Ցասորեստան մի օձն անհաւատ հրէա, բորբոքեալ ի բարկութենէ ընդդէմ քրիստոնէից, տեսեալ զպատկերն Քրիստոսի՝ էհար զնա և առ ժամայն ել արիւն։ Եւ առեալ պահէ ի յամանի միոջ, զի մի ոք գիտասցէ և գհեղեալն ի յերկիր սրբեալ ժողովէ։ Եւ ի մի յաւուր կամեցեալ զզօրութիւն արեանն Քրիստոսի փորձել, թանայ զմի մատն ի յարիւնն և մերձե || ցուցանէ առ ճակատն հիւանդի ումեմն, որ խսկոյն առողջացեալ նստի։ Եւ յետ 85բ

---

1 Կոստանդնուպոլսի։ 4 սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեայ։ 7 վազիրդենէ։ 9 Կոստանդնպոլիս։ 10 որդիս։ 13 ի չիք, մարդիկք։ 14 ծնողքն։ 15 ամի, ի չիք։ 16 ընթանուր։ 17 ի [յօդս] չիք, մարդիկք։ 18 որ, հողմն։ 19—20 և ի Ցիտալիայ։ 21 ի [Իտալիայ] չիք։ 21—22 ի [յերկնից] չիք։ 22 երկնից, մէջորէի։ 23 տղայ փխ. երեխայ։ 23—24 զմորուսքս։ 24 և Կոստնդնապոլսու, ի [Կալապրիայ] չիք, և [յայլ] չիք։ 28 յամառային։ 30 ազբիւր ցամաքեալք։ 32 ոմն, հրէայ։ 35 ե [զհղեալն] չիք։ 37 թանա, յարունն։ 37—38 ճակատ։

այնորիկ բազումք հիւանդք և ախտաժէտք օծմամբ արեանն առողջացեալք լինէին, և տեսեալ հրէիցն բազումք հաւատացին ի Քրիստոս։ Եւ զայն արիւնն բերեալ յԻտալիայ ի քաղաքն Մանթուայ, ի յեկեղեցի սրբոյն Անդրէի առաքելոյն հանդուցին անդ։

832 ի Ֆրանցիայ եղև սաստիկ հողմ մրրկախառն, կարկուտք և կայծակունք և որոտմունք։ Կարկուտքն կարի մեծամեծք այնքան, մինչ զի մինն երկոտասան ոտից չափով և էր կարծր, որպէս մարմար և սպանին զբազումս ի կենդանեաց և ի մարդկանց։ Ի Գնոնիայ անկան ի յօդոյն բազում օձք, և ի յօդս երևէին բազում այլակերպք կենդանիք, որք թռչէին։

890 ի Ֆրանցայ ծնաւ տղայ մի, որ ունէր զձեռս շան և զականջս իշոյ և զտուտ խոզի։ Եւ ի Վիթէրպայ, որ մերձ է Հռոմայ, ծնաւ կին մի զկատու։

1160 Հռոմայ առաւ ի Կոթացւոց և ասպատակեցաւ և մեծ մառն այրեցաւ։

1162 ի Միլան եղև այնքան մեծ ձմեռն և ձիւն սաստիկ մինչ զի 400,000 անձինք մեռան. և չորացան ամենայն պտղաբերք և բոյսք։

1173 ի սեպտեմբերի ամսոյն երևեցան 3 լուսնեակք և 3 արեգակք։[8] Ի Սիցիլիայ եղև այնքան մեծ շարժ, մինչ զի բազում քաղաքք տապալեցան ի հիմանց։

1180 սուլթանն Եգիպտոսի էառ զԵրուսաղէմ[9] և զԱսորեստուն։

1203 Վէնէտիկցիք առին զԿանդիայ և զԴ (4) ձի ձուլեալ ի պղնձոյ, բերին ի Կոստանդինուպօլսոյ և եդին ի դրան եկեղեցւոյ սրբոյն Մարկոսի և կան մինչև ցայսօր. նաև զմարմին սրբուհւոյ կուսին Լուցիայ։

1223 ի յերկիրն Թոսկանայ, Գրանդուքի, տեղեաց քար ի յերկնից և շարժ մեծ և սպան 300.000 դանձինս։

---

1 բազում։ 3 ի Հռոմ ի Ցիսալիայ, ի [քաղաքն] չիք։ 4 եկեղեցի։ 6 հողմն։ 7 զի կարկուտքն։ 9 կածր, մարմարեայ։ 13 առաւ, Վէթէրպայ։ 14 կատու։ 15 այս եղև ի թուին 1160 փխ. 1160, և առաւ Հռոմայ։ 17 այս եղև ի թուին 1102 փխ.1162, ի չիք, Մելան։ 20 այս եղև ի թուին 1173 փխ. 1172, 28 լուսինք։ 21 Սիցիլայ։ 25 այս եղև ի թուին 1203 փխ. 1203, Վէնէտկցիք, զկանդիայ, զչորս փխ. զԴ, ձու[լ]եալ։ 26 Կոստանդնպօլիսոյ։ 27—28 սրբուհոյ։ 29 այս եղև թուին 1223 փխ. 1223, Գրանտուքի։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բնագրում տարեթվերը գրված են կարմիր թանաքով։

2. Բ տարբերակում տարեթվերը սկզբից մինչև աշտարակաշինությունը, հակառակ Ա բնագրի, գրված են նախադասության վերջում. այսպես «Ցոբէլ եդիտ զվրանս և Ցորալ զերաժշտականութիւն՝ զքնար և զտաւիղ 170» փոխանակ՝ «170 ամին Ցոբէլ եդիտ զվրանս և Ցորալ զերաժշտութիւն՝ զքնար և զտաւիղ»։ Այսպես պատմում է նաև 250ա և այլ էջերում։

3. Բնագրում «զԱմամանեակ» ձևով։

4. Սույն ընդարձակ հատվածը տես և հմմտ. «Մ. Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», գիրք Ա, գլ. Ժ—ԺԱ։

5. Բնագրում «ի»-ի փոխարեն գրված էր «և»։

6. Բ տարբերակում տարեթվերը ընդհանրապես գրված են նախադասության վերջում։

7. Տես և հմմտ. Մ. Խորենացի, նույն տեղ, գիրք Ա, գլ. ԺԲ—ԺՋ։

8. Մ. Խորենացին այլ բան է գրում. «Այլ անդէն իսկ ի կենդանութեան իւրում Շամիրամ գծնեալ ի Նուարդայ սիրելւոյ կնոջէն Արայի, որ էր երկոտասան ամաց մնացեալ ի մահուանն Արայի, վասն առաջին իւրոց խանդաղատանացն որ առ Արայն Գեղեցիկ, կոչէ զանուն նորա Արայ...» (գիրք Ա, գլ. Ի)։

9. Մ. Խորենացու համաձայն Արա Գեղեցիկի որդու Արայի որդին եղել է Անուշավան Սոսանվերը (նույն տեղ, գիրք Ա, գլ. Ի)։

10. Հմմտ. «Մ. Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», գիրք Ա, գլ. ԻԱ, ԻԲ։

11. Երեմիա ԾԱ, 27։

12. «Մ. Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», գիրք Ա, գլ. ԻԲ։

13. Նույն տեղ, գիրք Ա, գլ. ԻԴ—ԼԱ։

14. Բնագրում սույն տարեթիվը գրված է փակագծի մեջ, իսկ մոտը գրված է «1802», այնուհետև վերջինիս վերևում գրված է «սղ[ա]լ», այդ պատճառով վերցրինք սկզբնական՝ «3802» թվականը։

15. Բնագրում սույն տողը գրված է կարմիր թանաքով։

16. Հրեական ապստամբությունը ճնշելու նպատակով Ներոնը 67 թ. (մ. թ. ա.) Վեսպասիանոսին ուղարկում է Պաղեստին։ Վերջինս Պաղեստինում մնում է մինչև 69 թ. (մ. թ. ա.) հուլիսը։ Ներոնի սպանությունից հետո Վեսպասիանոսը վերադառնում է Հռոմ, Երուսաղեմի պաշարման ղեկավարությունը հանձնելով որդուն՝ Տիտոսին, որն այն գրավում է 70 թ. (մ. թ. ա.)։

17. Հեղինակը սույն վկայությամբ եթե նկատի չունի Կոստանդին մեծի Միլանի էդիկտը (313 թ.), ապա այն ստույգ չէ, որովհետև Կոստանդին մեծն իշխել է 306—337 թ. թ.։

18. Նիկեայի տիեզերական առաջին ժողովը տեղի է ունեցել 325 թ., որին մասնակցել են նաև Հայաստանից Գր. Լուսավորչի որդին Արիստակեսը և Ակրիտեսը (հմմտ. Markwart „Die Entstehung der armenischen Bistumer" Roma, 1932, s. 199—209.

19. Կոստանդնապոլսի տիեզերական ժողովը տեղի է ունեցել 431 թ.։

20. Հեղինակը նկատի ունի Հռոմի նվաճումը վեստգոթերի թագավոր Ալարիխի կողմից։ Ալարիխը Հռոմը գրավել է Ստիլիխոնի սպանությունից հետո, 410 թ. օգոստոսի 24-ին։

21. Եփեսոսի տիեզերական ժողովը տեղի է ունեցել 431 թ.։

22. Քաղկեդոնի տիեզերական ժողովը տեղի է ունեցել 451 թ.։

23. Արաբները 636 թ. աշնանը Յարմուկ գետի մոտ չախչախեցին բյուզանդական կայսր Հերակլի բանակները և 638 թ. գրավեցին Երուսաղեմը, ապա Դամասկոսը։

24. Կարլոս Մեծի թագադրությունը տեղի է ունեցել 800 թ. դեկտեմբերի 25-ին, նրա իշխանությունը տևել է մինչև 814 թ.։

25. Բնագրում «ընդ իրեանց»-ը կրկնված է։

26. Համաձայն „Польский летописец с 964 по 1764 г. или хронологическое изображение происшествий королевства польскаго, со включением как Российскои, так и других сопредельных Польше Держав, краткои истории" (перевел с французскаго языка капитан Иван Одинцов в Санкт—Петербургe, 1782 года) աշխատության լեհերը քրիստոնեություն ընդունել են Մեչիսլավ թագավորի ժամանակ 965 թ., այնտեղ կարդում ենք. „В 964 году Мечислав бракосочетался с княжною Богемскою Домбровкою, с тем чтобы принять христианскую веру. В 965 года Мечислав крестился", стр. 4.

27. Հեղինակն ըստ երևույթին նկատի ունի Դերմ. կայսր Օտտոն I-ի (936—977 թ. թ.) Իտալական արշավանքը, սակայն հյուսիսային Իտալիայի նվաճումը տեղի է ունեցել 951 թ.։ Իսկ Հռոմը Օտտոն I-ը գրավել է 961 թ. և վերականգնել Հռոմեական արևմտյան կայսրությունը։

28. Արպադների իշխանական տան ներկայացուցիչներից Ստեփան I Արպադը 1000 թ. ընդունեց թագավորի տիտղոս, իշխելով 997—1038 թ. թ.։

29. Հեղինակն ըստ երևույթին նկատի ունի Կորգվայի խալիֆաթի կենտրոն Կորգվայի գրավումն իսպանացիների կողմից, սակայն այն տեղի է ունեցել 1236 թ.։

30. Հռոմեական պատերի «Ավինիոնի գերությունը», ինչպես հայտնի է, տեղի է ունեցել 1308—1378 թ. թ.։

31. Լենկ-Թեմուրի և Բայազիդ I-ի զորքերի միջև Ճակատամարտը տեղի է ունեցել Անկարայի մոտ, 1402 թ. հունիսի 20-ին։

32. Ինչպես հայտնի է օսմանական սուլթան Մուհամմեդ II-ը Տրապիզոնը գրավել է 1461 թ.։ Բնագրի «Կալթիան» աղավաղումն է Տրապիզոնի կայսր Կալո Իոհանի (Հովհան IV) անվան (հմմտ. Կատերինո Զենո. «Ուղեգրություններ», հ. Ա, էջ 154)։

33. Հոլ. Գուտենբերգի կողմից տպագրության գյուտը տեղի է ունեցել Մայնցում շուրջ 1450 թ.։ Բնագրի «Մակոնցան» վերաբերում է Մայնց քաղաքին, Ֆրանկֆուրտի (Մայնի վրա) մոտ։

34. Հեղինակը նկատի ունի Սեֆյան դինաստիայի հիմնադիր շահ Իսմայիլին, նա պատկանում էր իսլամի Շիա ուղղությանը, որը դարձավ Սեֆյան դինաստիայի պետական կրոնը։

35. Սույն վկայությունը հավանաբար վերաբերում է Ռագուզա քաղաքի նվաճմանը, որը գտնվում է Ադրիատիկ ծովի ափին և հիմա կոչվում է Դուբրովնիկ (Հարավ-Սլավիայում)։

36. Հեղինակը նկատի ուի 1526 թ. թուրքերի և հունգարների միջև տեղի ունեցած Մոհաչի ճակատամարտը, որտեղ հունգարները պարտվեցին, իսկ նրանց թագավոր Լուդովիկոս II-ը սպանվեց։

37. Հեղինակը նկատի ունի Ֆրանսիայի կողմից 1494—1559 թ. թ. կազմակերպված իտալական արշավանքներից մեկը, որի ժամանակ՝ 1527 թ. մայիսի 6-ին Հռոմը կողոպտվեց (Sacco die Romma):

38. Խոսքն Իսպանիայի դեմ ուղղված Նիդերլանդական ապստամբության մասին է, սակայն այն սկսվել է 1572 թ., երբ ծովային գյոլերից մեկը՝ 1572 թ. ապրիլի 1-ին գրավեց Բրիլ քաղաքը, որի գրավումն ազդանշան հանդիսացավ ընդհանուր ապստամբության։

39. Այս մասին մանրամասն տես Օրմանյան «Ազգապատում», էջ 2274—2275։ Այստեղից ընդհատվում է Բ տարբերակը։ Շարունակվող տարընթերցվածքները վերաբերում են Ե տարբերակին, ուստի տարընթերցվածքներից առաջ Ե-ն չենք նշի։

40. Բնագրում սույն թվի մոտ գրված է «սղալ է», միաժամանակ լուսանցքում ավելացրել են «4000»։

41. Բնագրում սույն թվի մոտ գրված է «սղալ է», միաժամանակ լուսանցքում՝ ավելացրել են «1656»։

42. Բնագրում սույն թվի մոտ գրված է «սղալ է», միաժամանակ լուսանցքում ավելացրել են «194»։

43. Բնագրում սույն թվի մոտ գրված է «սղալ է», միաժամանակ լուսանցքում ավելացրել են «595»։

44. Բնագրի Ե տարբերակում այստեղից մինչև 1520 թ. տարեթվերը դրվում են վկայությունների վերջում։

45. Սույն վկայությունը բացահայտ սխալ է, այն կատարվել է 1492 թ. հոկտեմբերի 12-ին։

46. Բնագրում գրված է «1382», հավանաբար գրչի կողմից, ուղղված է «1583»։

47. Էվրեյա կղզին, որը նվաճեց Մուհամմեդ II-ը։

48. Քաղաք Լոմբարդիայում Միլանի և Վերոնայի միջև։

49. Լուդովիկոս XII-ը, որն իշխել է 1498—1515 թ. թ.։

50. Խոսքը վերաբերում է 1494—1559 թ. թ. իտալական պատերազմների առաջին շրջանին, որը մղվում էր Ֆրանսիայի և Իսպանիայի կողմից Իտալիան նվաճելու համար։

51. Խոսքը վերաբերում է Սելիմ 1-ի գրավումներին։ Իրականում Սելիմ 1-ը մամլյուկներից Սիրիան, Արաբիան, Եգիպտոսը գրավել է 1517 թ. (հմմտ. Лэн-Пуль „Мус- династий" стр. 160—161.)։ Եգիպտոսում այս ժամանակ իշխում էր մամլյուկների Բուրջի դինաստիայի վերջին ներկայացուցիչ Աշրաֆ Թուման բեյը 1516—1517 թ. թ.

52. Իսպանական թագավոր Կարլոս 1-ը իշխել է 1516—1555 թ. թ., որը միաժամանակ իշխել է նաև Գերմանիայում Կարլոս V անվամբ 1519—1555 թ. թ.։

53. Բնագրում «եկայ» ձևով։

54. Հեղինակը նկատի ունի 1571 թ. հոկտեմբերի 7-ին Լեպանտոի ծոցում տեղի ունեցած ծովային նշանավոր ճակատամարտը, որտեղ թուրքական նավատորմը ջախջախվեց և կապուտան փաշան (ծովակալ) դերվեց դաշնակից՝ իսպանական, Վենետիկի և պապի, ուժերի կողմից, որոնց գլխավորում էր Դոն Ժուան Ավստրիացին։

55. Կրետե կղզու գլխավոր քաղաքը, որի անունով էլ հաճախ կոչում են կղզին։

56. Սույն հատվածը գրված է կարմիր թանաքով։

57. Պրոֆ. Ա. Աբրահամյանը ենթադրում է, որ սույն և հաջորդող մի քանի տարեթվերի հազարավոր ցույց տվող թվանշանը պակասում է գրչի հանցանքով, ուստի նա առաջարկում է այդպիսի տարեթվերին ավելացնել հազարավոր ցույց տվող թվանշան, այսպես՝ բնագրի 532, 536, 595 և այլ տարեթվերը նա կարդում է 1532, 1536, 1595 և այլն (տես «Մատենադարանի դիտական նյութերի ժողովածու», № 1, 1941, էջ 208)։ Պրոֆ. Աբրահամյանի ենթադրությունը սխալ է երկու պատճառով. նախ՝ վերոհիշյալ թվերի շարքում գտնում ենք 778, 832, 890 և այլ տարեթվեր, որոնց հազարավոր ցույց տվող թվանշան եթե ավելացնենք, կստանանք 1778, 1832, 1890, մինչդեռ ինչպես արդեն ցույց ենք տվել, սույն ժամանակագրությունը կազմվել է 1683 թ.։ Այլ բան է, եթե պրոֆ. Աբրահամյանը ասաջարկեր ավելացնել, ասենք, 551 տարի մինչև հազարամյակը։

Երկրորդ՝ հեղինակը ենթավերնագրում դրում է, որ «են և այլք ինչք բաղում զարմանալիք ղորսց զսակաւս շարադրեցից յետ ծննդեանն Քրիստոսի» և այնուհետև զարմանահրաշ դեպքերը Քրիստոսի ծննդյան օրվանից հաջորդաբար թվարկելով հասցնում է մինչև XIII դարի առաջին քառորդը։ Այսպիսով բնագրում դրված թվերը կարծում ենք նույնությամբ էլ մնալու են։

58. Սույն վկայության նման (հմմտ. վերևում էջ 273, 274) մի տեղեկության էլ հանդիպում ենք հետագայում, ակնատեսի կողմից արձանագրված, որը պահվել է Մատենադարանի № 3050 ձեռագրում, որտեղ կարդում ենք. «Դրեցաւ ՌՃԽԸ (=1699) թվին, յորում ամին տեսաք Գ (3) ար[ե]գակն» (էջ 225 բ)։

59. Եթե խոսքը վերաբերում է Սալահեդդինի կողմից Երուսաղեմի գրավմանը, ապա այն տեղի է ունեցել 1187 թ. հոկտեմբերի 3-ին։ (Տես վերևում, էջ 77, 92, ծանոթ. 28)։